


«Վարդենիկը մեր աչքերով» լուսանկարչական ցուցահանդեսը օգնում է հասցեագրել համայնքի խնդիրները

Հունվար ամսին Վարդենիկի ՅԳԾ-ն (Գեղարքունիքի մարզ) ուրոշեց կազմակերպել ֆոտոցուցահանդես «Վարդենիկը մեր աչքերով» խորագրով, որի նպատակն էր վեր հանել համայնքում առկա խնդիրները և գտնել դրանց հնարավոր լուծումները: Այս նպատակով ՅԳԾ-ն կազմակերպեց լուսանկարչական հրմտությունների զարգացմանն ուղղված սեմինար, որի մասին բնակիչները տեղեկացան համայնքում փակցված հայտարարությունների միջոցով: Բազում երիտասարդներ ցանկություն հայտնեցին մասնակցելու դասընթացին, որը անցկացվեց Վարդենիկի ՅԳԾ փորձառու և գիտակնդանների կողմից: ՅԳԾ-ն ձեռք բերեց համայնքում առկա խնդիրները պատկերող լուսանկարներ, որոնցից էին աղբա-

հանության խնդիրը, Մշակույթի տան անմխիթար պայմանները, փողոցների լուսավորության խնդիրը, համայնքային ճանապարհների վատ վիճակը և տուրիզմի զարգացման համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը: Մոտ 70 հոգի մասնակցեցին ցուցահանդեսին՝ ներկայացնելով 550 լուսանկարներ: Ցուցահանդեսը տեղի ունեցավ մարտի 10-ին համայնքի մշակույթի տանը: ՅԳԾ հրավերով ցուցահանդեսին ներկա էին գյուղապետը, համայնքի բնակիչները, ինչպես նաև ավագանու անդամները: Ցուցահանդեսի ընթացքում համայնքի ղեկավարները համաձայնեցին, որ անհրաժեշտ է հնարավորինս շուտ լուծել համայնքի առավել հրատապ խնդիրները: Առաջարկվեց ցուցահանդեսը տեղափոխել գյուղապետարանի սրահ և մի կողմում փակցնել առկա խնդիրները բարձրաձայնող, իսկ մյուս կողմում՝ արդեն լուծված խնդիրները պատկերող լուսանկարներ: Ըստ Վարդենիկի բնակիչների՝ այս միջոցով համայնքում առկա խնդիրները անընդհատ կգտնվեն ուշադրության կենտրոնում և բոլոր հնարավոր միջոցները կծեռնարկվեն դրանց լուծման համար:



Վարդենիկի համայնքի (Գեղարքունիքի մարզ) բնակիչները համայնքային խնդիրները պատկերող ցուցահանդեսի ժամանակ



Համայնքի մշակույթի տան վերանորոգման խնդիրը հասցեագրող նամակ՝ կից 500 ստորագրություններով

Ցուցահանդեսը օգնեց ևս մեկ անգամ համայնքի ղեկավարության ուշադրությունը սևեռել առկա խնդիրների վրա: Բնակիչները ստիպված չեղան երկար սպասել ցանկալի արդյունքներին, քանի որ մայիսի 15-ից աղբահան ավտոմեքենան շրջում է համայնքի փողոցներով շաբաթական մկազազույնը մեկ անգամ և մաքրում կուտակված աղբը: Գիշերային լուսավորության վերաբերյալ մեկ այլ խնդիր ևս լուծման ընթացքում է, քանի որ համայնքի ծայրամասային փողոցներում համապատասխան գործողություններ են իրականացվում՝ բնակիչների ակտիվ մասնակցությամբ և աջակցությամբ: Համայնքը նաև

քայլեր է ձեռնարկել հասցեագրելու Մշակույթի տան խնդիրը՝ ՀՀ նախագահին հղելով 500 ստորագրություն պարունակող նամակ: ՅԳԾ անդամները տեղական իշխանությունների հետ համաձայնության եկան մասնակցելու ավագնու նիստերին՝ խորհրդակցական ծայրի իրավունքով: Նաև որոշվեց ստեղծել համայնքային կայքէջ և տպագրել «Վարդենիկ» անվանումով տեղական թերթ: Համայնքի բնակիչները արժեվորեցին ցուցահանդեսի կազմակերպման գաղափարը, քանի որ այն մասնակիցներին զինեց նոր հմտություններով, օգնեց բացահայտել համայնքի խնդիրները և համատեղ ջանքերով դրանք լուծել:

Աղբահանության խնդիրը վերջապես լուծված է Աշոտավան համայնքում

Աշոտավան համայնքը (Սյունիքի մարզ) ուներ աղբահանության խնդիր, որը համայնքի ՅԳԾ-ն փորձել էր բազմիցս լուծել՝ դիմելով տարբեր անհատների և կազմակերպությունների օգնությանը: Նրանք նույնիսկ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջի միջոցով առցանց նամակ էին հղել իրենց մարզի պատգամավորին: Քանի որ այս բոլոր նախաձեռնությունները ոչ մի դրական արդյունքի չբերեցին, նրանք որոշեցին խնդիրը լուծել իրենց ուժերով և հունվար ամսին հանդիպում կազմակերպեցին համայնքի բնակիչների և տեղական իշխանությունների հետ: ՅԳԾ անդամները ներկայացրեցին համայնքի հասանելիության վիճակը՝

պնդելով որ համայնքը պետք է համախմբվի և իրականացնի աղբահանություն: ՅԳԾ անդամները ներկայացրեցին իրենց ծրագիրը՝ համայնքի ղեկավարությանը խնդրելով տրամադրել մի ավտոմեքենա, որը աղբը կտեղափոխի այդ նպատակով ճախատեված տարածք: Յուրաքանչյուր տնտեսություն համայնքից վճարել ամսական 200 դրամ, ինչը կտրամադրվի վառելիք գնելու և վարորդին աշխատավարձ վճարելու համար: Քննարկումից հետո ծրագիրը հաստատվեց և կազմվեց ժամանակացույց՝ հետագա աշխատանքները համակարգելու նպատակով: Աղբահավաք մեքենան սկսեց աշխատել փետրվար ամսից:

Արագածի ՅԳԾ-ն ստեղծում է համայնքային ոստկայք

Օգտվելով ինտերնետ կայքի առկայությունից՝ Արագածի ՅԳԾ-ն (Արագածոտնի մարզ) որոշեց ստեղծել համայնքային ոստկայք, և մի խումբ երիտասարդներ սկսեցին ոստկայքի ձևավորման աշխատանքները: Ոստկայքի ստեղծման գործընթացում համայնքի բնակիչներին ներգրավելու և կայքէջի ձևավորման մեջ նրանց կարծիքները արտացոլելու նպատակով ՅԳԾ անդամները համայնքի բնակիչների հետ կազմակերպեցին մի շարք հանդիպումներ և քննարկումներ, որոնց ընթացքում համայնքի անդամներին են ներկայացրել կայքէջի կառուցվածքը և համայնքի բնակիչների կողմից առաջարկված կայքի բաժինները: Կայքէջը ներկայումս պատրաստման փուլում է: Այն կներառի կրթական, առողջապահական, բնապահպանական, գյուղատնտեսական ոլորտների վերաբերյալ բաժիններ, ինչպես նաև կընդգրկի ընդհանուր տեղեկատվություն գյուղի աշխարհագրության և պատմության վերաբերյալ: Մեկ այլ բաժին կմվորվի ՅԳԾ նախկին և ներկա նախաձեռնություններին, իսկ «Պատկերասրահ» բաժինը լուսանկարների միջոցով կլուսաբանի համայնքային միջոցառում-

ներն ու ՅԳԾ գործունեությունը: Կայքէջը համայնքին հնարավորություն կընձեռի ներկայացնել իրենց ձեռքբերումները և բարձրաձայնել համայնքային խնդիրները: Տեղական իշխանություններն իրենց հերթին հնարավորություն կունենան հանրությանը ներկայացնել իրենց ընթացիկ աշխատանքները և ապագա ծրագրերը: ՅԳԾ անդամները նախատեսում են մայիս ամսին կազմակերպել կայքէջի պաշտոնական շնորհանդեսը տեղական իշխանություններին, համայնքի բնակչության, ՅԳԾ անդամների, հարևան համայնքների և այլ հյուրերի մասնակցությամբ: ՅԳԾ անդամները գտնում են, որ ոստկայքը համայնքի բնակիչների համար կծառայի որպես տեղեկատվության մատչելիության բարձրագույն միջոց և կնպաստի տեղական իշխանությունների հետ երկխոսության և համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը:



Աշոտավանի ՅԳԾ-ի նախաձեռնության շնորհիվ համայնքի աղբահանության խնդիրը լուծված է





Սյունիքի մարզի ՀԳՀ/ԵԳԱ-ները զարգացնում են համայնքի բնակիչների համակարգչային գիտելիքները դասընթացների և սեմինարների միջոցով

Համայնքի բնակչության՝ համացանցից օգտվելու գիտելիքներն ու հմտությունները զարգացնելու նպատակով «բացահայտենք համացանցը» խորագրով դասընթաց էր կազմակերպվել Սյունիքի մարզի չորս համայնքների երիտասարդների նախաձեռնությամբ (Խնածախի ԵԳԱ, Գորայքի ԵԳԱ, Արծվանիքի ՀԳՀ, Աշոտավանի ՀԳՀ)։ Չորս համայնքների ակտիվ ներկայացուցիչները համատեղ ուժերով մշակել էին դասընթացի նյութերը և միմյանց փոխանցել էլեկտրոնային նամակների միջոցով։ Նրանք նաև ուսումնասիրել էին այն կայքերը, որոնց միջոցով կարող էին տեղեկատվություն ստանալ օրենքների և նոր ընդունված որոշումների, հայտարարությունների, թարմ նորությունների և համայնքի համար կարևոր այլ տեղեկատվության վերաբերյալ։ Ի լրումն, մասնա-

կիցները կատարեցին մի քանի առաջադրանքներ, որպեսզի ամրապնդեն ձեռք բերված գիտելիքները։ Մասնակիցները կարևորեցին այս նախաձեռնությունը և նշեցին, որ քանզի ՏՏ ոլորտը շատ ընդարձակ է, մեկ հանդիպման ընթացքում անհնար է ներկայացնել գոյություն ունեցող ահռելի քանակով տեղեկատվությունը։ Նրանք ավելացրեցին, որ պետք է պարբերաբար կազմակերպել նման դասընթացներ և ներկայացնել ոլորտի նորությունները և մասնակիցներին զինել լրացուցիչ հմտություններով։ Մասնակիցները նաև այն կարծիքին են, որ սեմինարների ընթացքում ձեռքբերած գիտելիքների շնորհիվ հնարավոր կլինի համացանցի միջոցով իրականացնել համայնքի բնակչության շահերի և իրավունքների ավելի ակտիվ պաշտպանություն։



ԵՀԳԾ ակտիվ խմբերի նախաձեռնությամբ շնորհիվ Սյունիքի մարզի երիտասարդները զարգացնում են իրենց համակարգչային գիտելիքները

Մարտունու ԵԳԱ-ն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ՏԻՄ ընտրություններին

Այս տարվա հունվարի 21-ին Մարտունի համայնքում (Գեղարքունիքի մարզ) անցկացվելու էին ավագանու անդամների ընտրություններ։ Մարտունու ԵԳԱ անդամները որոշեցին ակտիվորեն մասնակցել այս գործընթացին և աջակցել արդար և թափանցիկ ընտրությունների կայացմանը։ Նախևառաջ նրանք ակտիվ մասնակցություն ունեցան համայնքի ընտրացուցակների ճշմանն կործանելու, իսկ հետո համոզվելու կազմակերպեցին ավագանու թեկնածուների և համայնքի երիտասարդության հետ, որպեսզի վերջիններս իրազեկվեն ավագանու դերի, լիազորությունների և պար-

տավորությունների վերաբերյալ և ծանոթանան նրանց ծրագրերին։ Հանդիպման ընթացքում թեկնածուները ներկայացրեցին համայնքի խնդիրները մասին իրենց պատկերացումները և այն լուծումները, որոնք ծրագրում են իրենց ղեկավարման ընթացքում։ ԵԳԱ անդամները բազում հարցեր տվեցին ավագանու թեկնածուներին՝ վերջիններիս խնդրելով հիմնավորել իրենց տեսակետները։ Երիտասարդների կարծիքով ընդամտորինակ համոզիչություններ օգնում են համայնքի բնակիչներին դառնալ ավելի տեղեկացված և կայացնել ճիշտ որոշում տեղական ընտրությունների ժամանակ։

Ծովագարդի ՀԳՀ-ն հասցեագրում է անապահով ուսանողների խնդիրները

Ծովագարդ համայնքում կան Գավառի, Սևանի և Երևանի բուհերում և քոլեջներում սովորող մոտ 55 ուսանողներ, ովքեր մեծ դժվարությամբ են մուծում ուսման վարձը և ամենօրյա ճանապարհածախսը։ Հաշվի առնելով ընտանիքների ծանր սոցիալական վիճակը և ուսման բարձր վարձերը՝ Ծովագարդ ՀԳՀ անդամները (Գեղարքունիքի մարզ) որոշեցին քննարկել այս խնդիրը և փորձել գտնել լուծման հնարավոր տարբերակներ։ ՀԳՀ անդամները և ուսանողները որոշեցին հանդիպել տեղական իշխանություններին և խնդրել տրամադրել ֆինանսական միջոցներ, որպեսզի ուսանողները կարողանան հոգալ իրենց ճանապարհածախս-

ւր։ Հաշվի առնելով, որ ընթացիկ տարվա բյուջեն դեռ հաստատված չէր, նրանք որոշեցին նամակ հղել տեղական իշխանություններին՝ խնդրելով դրամական օգնություն տրամադրել սոցիալապես անապահով ուսանողներին։ ՀԳՀ անդամները նաև մասնակցեցին ավագանու հանդիպմանը՝ ևս մեկ անգամ շեշտադրելով խնդրի կարևորությունը։ Ավագանու անդամները բավարարեցին ՀԳՀ խնդրանքը և համաձայնեցին, որպեսզի այս տարի գյուղատնտեսության ամենամիս որոշակի գումար տրամադրի անապահով ուսանողներին՝ որպես ճանապարհածախսի փոխհատուցում։

Հերիերի ԵԳԱ-ն բարձրացնում է համայնքի իրազեկվածությունը հակակոռուպցիոն մեթոդների և մեխանիզմների վերաբերյալ

Հերիերի ԵԳԱ-ն (Վայոց ձորի մարզ) տեղեկացել էր, որ ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) շրջանակներում Եղեգնաձոր քաղաքում բացվել է Հահերի պաշտպանության և աջակցության կենտրոն (ՀՊԱԿ)։ ԵԳԱ անդամները որոշեցին հանդիպում կազմակերպել վերոնշյալ կենտրոնի ներկայացուցիչների հետ, որպեսզի բարձրացնեն համայնքի բնակչության իրազեկվածությունը հակակոռուպցիոն նախաձեռնությունների վերաբերյալ։ Հունվար ամսին հանդիպումը կայացավ ԵԳԱ անդամների, ուսուցիչների և գյուղատնտեսարանի աշխատակիցների մասնակցությամբ։ Կենտրոնի ներկայացուցիչ պրոֆ. Ղազարյանը ներկայացրեց կենտրոնի նպատակը, խնդիրները և գործունեությունը,

ինչպես նաև անդրադարձավ կենտրոնում գործող թե՛ զօրին։ Մասնակիցները քննարկեցին ընթացիկ կոռուպցիոն դեպքերը և մարզի կոռուպցիոն ցուցանիշները։ Պրոֆ. Ղազարյանը ԵԳԱ գրադարանին մվիրեց հակակոռուպցիոն նյութեր և գրականություն։ Նա ԵԳԱ անդամներին խոստացավ իրավիճակ մասնակցելու կենտրոնի կողմից կազմակերպվող միջոցառումներին, ինչպես նաև նրանց ներառել շահերի պաշտպանությանն ուղղված տարբեր նախաձեռնություններում։ ԵԳԱ անդամները վստահ են, որ կոռուպցիայի դեմ պայքարի մեթոդների և մեխանիզմների վերաբերյալ բնակչության իրազեկմանն ուղղված գործողությունները կբերեն ցանկալի արդյունքների և կնպաստեն կոռուպցիոն դեպքերի նվազեցմանը։

Համայնքի հաշմանդամները Մարզ ՀԳՀ-ի ուշադրության կենտրոնում են

Համայնքում բնակվող հաշմանդամներին աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ Մարզի ՀԳՀ (Լոռու մարզ) անդամները որոշեցին բացահայտել այն ընտանիքները, որտեղ բնակվում են սահմանափակ հնարավորությունների տեր մարդիկ և պարբերաբար նրանց օգնություն և տեղեկատվություն տրամադրել։ ՀԳՀ անդամները նյութեր պատրաստեցին հաշմանդամների իրավունքները սահմանող օրենքների, աջակից կազմակերպությունների և առողջապահական կառույցների կողմից հատկացվող արտոնությունների վերաբերյալ։ Հիմնվելով ձեռք բերված տեղեկատվության վրա նրանք խորհրդատվություն կազմակերպեցին հաշմանդամների համար, որի նպատակն էր վերջիններիս իրազեկել իրենց իրավունքների և սահմանված արտոնությունների վերաբերյալ։ Հանդիպումից հետո հաշմանդամները

ներկայացրեցին իրենց կարիքների բարելավմանն ու խնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ, որպեսզի ՀԳՀ-ն դրանք ներկայացնի պատկան մարմինների ուշադրությանը։ Այսպիսի հանդիպումները շատ կարևոր են, քանզի որ բնակվելով հեռավոր համայնքներում նրանք հաճախ անտեղյակ են ոլորտը կարգավորող օրենքների և գործընթացների վերաբերյալ։ ՀԳՀ անդամները նաև ծրագրում են հանդիպում կազմակերպել հաշմանդամների և շահագրգիռ կառույցների մասնակցությամբ, որպեսզի վերջիններս ներկայացնեն իրենց կողմից մատուցվող ծառայությունները։ Սեկ անգամ ևս ՀԳՀ-ն նշեց, որ համայնքը պետք է ամեն ինչ անի, որպեսզի հաշմանդամները ինտեգրվեն հասարակությանը, ապրեն ակտիվ կյանքով և իրենց զգան հասարակության լիարժեք անդամներ։



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

Կրթությանը զարգացման ակադեմիա
Այգեճոր 10,
0019 Երևան
Հայաստանի Հանրապետություն

Հեռ.՝ (374 10) 225 636
Ֆաքս՝ (374 10) 275 686
Էլ փոստ՝ ycap@aed.am

Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագիր



Academy for Educational Development

Սեր ուսուկայքերն են՝

<http://ycap.am>

<http://aed.am>

Լճաշենի ԵԳԱ անդամները հանդիպում են՝ քննարկելու կանանց դերն ու մասնակցությունը քաղաքական գործընթացներում

Համայնքներում տեղական որոշումների կայացման գործընթացում կանանց պասիվությունը կանխելու և քաղաքականության մեջ նրանց մասնակցության կարևորությունը շեշտադրելու նպատակով՝ Լճաշենի ԵԳԱ-ն որոշեց կազմակերպել հանդիպում, որը կայացավ մարտի 8-ին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին գենդերային հավասարության հնարավորություններն ու խնդիրները, ինչպես նաև այն խոչընդոտները, որոնք կանանց խանգարում են մասնակցել ՏԻՄ գործունեությանը: Հանդիպման նպատակն էր նաև խրախուսել կանանց մասնակցել համայնքի սոցիալական և քաղաքական կյանքին և իրենց ներդրումն ունենալ համայնքի ղեկավարման և զարգացման գործում: ԵԳԱ անդամներից հուզվում է այն խնդիրը, որ համայնքի ավագանու բոլոր յոթ անդամները արական սեռի ներկայացուցիչներ են և կանայք երբևէ չեն առաջադրել իրենց թեկնածությունը այս պաշտոնի համար: ԵԳԱ անդամների կարծիքով կանայք հետաքրքրված չեն և չեն ուզում դառնալ համայնքի ավագանու անդամ, քանի որ համաձայն տարածված կարծրատիպի՝ այն «կանացի գործ» չէ: Կանայք հիմնա-

կանում զբաղվում են տան գործերով և երեխաների խնամքով ու դաստիարակությամբ: ԵԳԱ-ն անհամաձայնացած է այն փաստով, որ գենդերային կարծրատիպերը սահմանափակում են կանանց մասնագիտական առաջխաղացման հնարավորությունները և կարող են ամբողջովին ոչնչացնել նրանց ղեկավարման կարողությունն ու ներուժը: ԵԳԱ անդամներից մեկը տեսակետ հայտնեց, համաձայն որի ՏԻՄ մասին ՀՀ օրենքը պետք է սահմանի հատուկ քվոտաներ կանանց համար (նվազագույնը 20%): Սակայն մյուս անդամները չհամաձայնեցին այս տեսակետին՝ պնդելով, որ եթե կանայք ցանկություն ունեն դառնալ ավագանու անդամ, ապա ոչ ոք և ոչինչ չի կարող նրանց խանգարել այդ գործում: Ներկաները եկան համաձայնության, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել վերացնելու գենդերային կարծրատիպերը և ակտիվացնելու համայնքի կանանց: ԵԳԱ-ն կանանց մասնակցության շատ լավ օրինակ է, քանի որ ակումբի անդամները մեծամասամբ իզական սեռի ակտիվ ներկայացուցիչներ են, ունենալով թեկնածությունը կարող է առաջադրվել հաջորդ ՏԻՄ ընտրությունների ժամանակ:

ԵՀԳԾ-ն ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորված ծրագիր է, որն իրականացվում է Կրթությանը զարգացման ակադեմիայի (ԿԶԱ) կողմից: ԵՀԳԾ հիմնական նպատակն է **ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր համայնքում սերմանել անհատի կամ անձանց խմբի՝ որպես հանրային շահերի պաշտպան ծառայելու գաղափարը եւ դրա կարելիությունը:**

Ծրագրի երեք հիմնական բաղադրիչներն են.

1. Ստեղծել մեխանիզմներ, որոնց միջոցով կիսբանվի երիտասարդների եւ համայնքների այլ անդամների մասնակցությունն իրենց համայնքներում հանրային հարցերի լուծման գործընթացին՝ աջակցելով համայնքներում երիտասարդության, համայնքային եւ հանրային խնդիրների լուծմանը զբաղվող երիտասարդական գործունեության ակումբների (ԵԳԱ) եւ Համայնքների գործունեության համեմատողների (ՀԳՀ) հիմնադրմանը:
2. Ավելացնել երիտասարդների եւ համայնքների այլ անդամների՝ քաղաքացիական ակտիվության բարձրացման եւ հանրային հարցերի լուծման գործընթացում ավելի ակտիվ մասնակցելու համար անհրաժեշտ գիտելիքները/հմտությունները՝ երիտասարդներին եւ համայնքի այլ անդամներին տրամադրելով հնարավորություններ, որոնք կօգնեն բարձրացնել նրանց իրազեկությունը, հարստացնել գիտելիքները եւ զարգացնել հմտություններ, որոնք անհրաժեշտ են երիտասարդությանը, համայնքի այլ անդամներին եւ հանրությանը հուզող խնդիրները հաջողությամբ լուծելու համար:
3. ԵԳԱ/ՀԳՀ-ներն իրականացնեն ծրագրեր, որոնք կբարձրացնեն քաղաքացիական ակտիվությունը եւ մասնակցությունը, կբխեն հանրության եւ համայնքի շահերից, կնպաստեն համայնքներում հանրային հարցերի լուծման գործում սիստեմատիկ բարեփոխումների իրականացմանը եւ կիսբանված համայնքի կարիքների լուծման համար ավելի կայուն մոտեցումների որդեգրումը:

Աշնակի ԵԳԱ-ն նշում է Ակումբի հիմնադրման չորրորդ տարեկիցը

Մարտ ամիսը խիստ նշանակալից էր Աշնակի ԵԳԱ անդամների համար (Արագածոտնի մարզ), քանի որ նրանք նշում էին ԵՀԳԾ շրջանակներում գործող երիտասարդական գործունեության ակումբի հիմնադրման չորրորդ տարեկիցը: Միջոցառման ընթացքում նրանք ներկայացրեցին իրականացված նախաձեռնությունները, ընթացիկ և ավարտված ծրագրերը, ինչպես նաև ապագա պլանները: ԵԳԱ անդամները նաև պատրաստել էին մի քանի բեմականացումներ, որոնց նպատակն էր բարձրացնել համայնքի բնակիչների իրազեկվածությունը տարբեր թեմաների շուրջ: Դրանց թվում էին կոռուպցիոն դեպքերը նկարագրող երեք կարճ բեմադրությունները՝ որոնք մտացածին պատմություններ էին՝ հանրու-

թյանը իրազեկելու կոռուպցիայի և հակակոռուպցիոն մեթոդների վերաբերյալ, ինչպես նաև խրախուսելու պայքարել կոռուպցիոն դեպքերի դեմ: Միջոցառումը տեղի ունեցավ համայնքի մշակույթի դահլիճում: Հյուրերի շարքում էին գյուղապետը, տարբեր ՀԳ-ների ներկայացուցիչներ, գյուղապետարանի աշխատակիցներ, ուսուցիչներ, համայնքի բնակիչներ ինչպես նաև հարևան Դավթաշեն և Կարմրաշեն համայնքների ԵԳԱ/ՀԳՀ անդամներ: ԵԳԱ անդամները շատ ուրախ էին և ոգևորված: Նրանք ևս մեկ անգամ արժեկրեցին իրենց աշխատանքն ու գործունեությունը, որը ծավալում են ի նպատակ համայնքի զարգացման և համագյուղացիների բարեկեցության:



Աշնակի ԵԳԱ անդամները (Արագածոտնի մարզ) նշում են ակումբի հիմնադրման չորրորդ տարեկիցը՝ ներկայացնելով իրենց ձեռքբերումներն ու ապագա ծրագրերը